



ԻՋԵՎԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Տավուշի մարզ ք/Իջևան Ուսանողական փ 3 հեռ. (093)007010 e-mail info_idjevan@aarhus.am, david.ghazaryan.83@mail.ru

Ե N-002

« 12 » մայիսի 2014թ.

ՀՀ Տավուշի մարզի Իջևանի
Քաղաքապետ Վ. Ղալումյանին
Իջևանի Օրհուս կենտրոնի
Համակարգող՝ Դավիթ Ղազարյանից

Հարցում

Հարգելի պարոն Վ. Ղալումյան,

Խնդրում եմ <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների համաձայն տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

– Ինչ պատճառով են կտրվել Իջևան քաղաքի Անկախության փողոցում գնտվող 3 եղնինները.

– Արդյոք քաղաքապետարանը դրանց համար ուներ համապատասխան թույլտվություն.

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ խնդրում եմ սույն հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության/ 30-օրյա ժամկետում):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում, խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին (<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Հարգանքներով՝

Դավիթ Ղազարյան /

Իջևանի օրհուս կենտրոնի համակարգող